



ԽԱՐԵԼԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒՆԻՍԻ 25-ին. Թիֆլիս. №26

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԷՍԿՈՒՐՍԱՆՏԵՐԻ ԱՌԱՋ, ԿՈՎԿԱՍԻ ԱԶԳԱԲՆ. ԵՒ ՍՐԱՆՑ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Bykova

ՅԱՆՑ.ԵՄԻՍՈՎԱ

(Կովկասում մեծ արքայական պատիւներով ընդունեցին, բայց իրենք վայրենի էին, կարծես մարդ արտրած չէին տեսել, ոտից զլուխ զինւած էին, ամբողջ կենդանիներ էին խորովում մեզ պատուելու համար և մեր վերարկուներն էլ գողանում էին...)

(Էքսկուրսանտների զեկուցումը լրագրներից)

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

«ԽԱԹԱՖԱՆԱՅԻ»
Բ Ա Ժ Ն Ե Գ Դ Ե Ն Է



Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » —

«ԽԱԹԱՖԱՆԱՅԻ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՉԱՆԴԱԿ» օրաթերթը պահանջ՝ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարգացողներին պէտք է նկատենք զլիտվայր:



VI
Տարի

ՄԱԹԱՖԱՆ

VI
Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՖԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլիտիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Անհրաժեշտ բերք բոլոր բնագիտական համար

«ԽԱԹԱՖԱՆԱՅԻ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆիի ուզի:

Հասցէն՝ Тифлисы Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայանան

«ԽԱԹԱՖԱՆԱՅԻ» ՕՐԱՑՈՑՑԸ

1911 ՅՈՒՆԻՍ 30 օր

25

Суббота **ՂԱՖԱԹ** Պաշտօտ
Հունի 13

26 (կիր.) Անւանակուելիւն զուսուսից Հաւարարու, որք որպէս ցանկանան անպէս պար ածեն տիկնանց, սակայն զինչ անես, որ զիւրեանց տիկնայրն տան մէջ հակառակ երեսիս ցուցանեն:

27 (բ. շ.) Տօն վարժապետաց ամենայնից, որք ձմեռը նահատակեն ի մէջ զպրօցաց հայոց, իսկ ամառը թաղեն ի մէջ Ձրի բօշկային ժողովաց ուսուցչականի:

28 (գ. շ.) Շաբթիկարձ մահան սիրեցելոյն մեր Ղազարոս Աղայանի: Չցանկալ սերմն նորա թող յաւերժ կոթող լինիցի անմոտաց յիշատակին նորա:


29 (դ. շ.) Տօն նորափեսայից Հայաստանի աշխարհին, որք նորահարսի էշխեմէն կլպեն որպէս բօխին Շիրաչխանայի և յետ մի քանի ամսեանն միայն նկատեն զզլտած հաւ լինելն իւրեանց:

30 (ե. շ.) Չայտօր սիրողքս թատրոնին հայոց բարեհաճ մասնակցութեամբ հաւ ծախող Միլիակի և բեմիօրութեամբ զօրձլապան Համբոյի մեկնեացին ի Փարիզ ի մէջ արքայական պալատից համերգս և ներկայացումս կազմակերպելու:

31 (ուրբ. զայս ամիսն մեր ի 31 օրէն բաղկանայ) Տօն Չաբալին սրբոյ ուպրաւային Թիֆլիսու, որ վասն ցուցանելոյ զինքն և յապագայում զչլէնութիւնն ընդունելու համար յաջմէ քամիս ընդունէ և յանկէ փոթորիկ արձակէ, վասն որոյ առաջարկեմ զնա անգիր անել շես լսեցի զչլէնութեան ձայն... բայց ափսոս որ երազ էր:

Ատողագէտ—աօմարագէտ և օրացոյցագէտ
Փարեմուզ

ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԵՒ ԱՆՄՈՒՆԱԼԻ



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ

«ԽԱԹԱՖԱՆԱՅԻ» ծածկանուն աշխատակից:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» և «ԽԱԹԱԲԱԼԱ» թերթերի խմբագրութիւնը յայտնում է հայ հասարակութեան, որ իր անմոռանալի աշխատակից

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ

ածինի յուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի ամսին 26-ին առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Լեւոնտաղ-կայա փող. № 4) դէպի Վանքի աւագ եկեղեցին: Թաղումը՝ Պօլիվանքի գերեզմանատանը: Ամբիճքը կը կատարւի ամեն օր. երեկ. ժ. 7¹/₂-ին հանգ. բնակարանում:

Մ Ե Բ Բ Ո Լ Ո Ր Ե Պ Ե Ռ Ի Կ

Բ Ե Թ Ե Ն Ո Ր Փ Ն Ե Ր Ի Ն

ԽՈՆԱՐՀԱԲԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

Թէ հին պարտքերը վճառել և եթէ նորից և նԱՂԻ բաժանորդագրւել:

ԵՐ Ե Զ Ի Ս Մ Է Զ

(Մուխամազ)

Երագիս մէջ Թիֆլիզ մըտի՝
 Կեանքն իսկի հանդարտ չտեսի,
 Դիրքը—փոր-փոս եւ ձախ ու ծու,
 Փողոցները—հարթ չտեսի,
 Հին սերունդը—ստո՞ղջ, ուրախ,
 Բայց նորը—շատ զարթ չտեսի.
 Թայփայական մարդորսների—
 Որսը քիչ պարարտ չտեսի:

Զունիա-դաւալ, թառ, музыка,
 Հարայ-նրոց, կենաց թասեր,
 Бульваръ, փրքե, կլոճ, այգի, պարտէզ,
 Թայտանամուկ մարդկանց դասեր.
 Ամենուրէք—քէ ֆ, կերուխում,
 Համբոյր, խոստում, նշտանք, եւ սէր.
 Ամենուրէք— ուրախութիւն,—
 Ոչ մէկուր—դարդ չտեսնի:

Աչք ամեցի չըքնաղ սեռին՝—
 Վարդագոյն էր նրանց մորթը.
 Բրնակա՞ն էր այն գոյնն արդեօք,
 Թէ՞ այդպէս էր ներկի օրթեք.
 Բազուկներից մինչ ուսերը,
 Կուրծքը—բաց էր մինչեւ պորտը.
 Աչքի տակով շատ նայեցի՝
 Հազուած կընամարդ չը տեսի:

Պատկանելի ձերունիքը՝
 Ազատ նրստած «կարմիր-տանը»՝
 Անձնալաճառ կոյսերի հետ
 Դո՞ւզ էին արել մէլոյանը...
 Լիրք, աննամուս մարդի նամար
 Ի՞նչ է կինը, գերդաստանը.
 Ընտանեկան կեանքին հաստատ—
 Մի հատ արդամարդ չտեսի:

Ազգասէրի անուն կըրող
 Բանի՞ հազար մարդիկ կային—

Պոռոտախօս, ճոռմաքան,
 Աւրոցներ շինող—օղային.
 Եթէ դա՛ է «նոր-սերունդը»՝
 Զորք տարել է խեղճ հային...
 Ազգի նամար անկեղծ ցաւող—
 Մի երիտասարդ չտեսի:

Դպրոցների սան-սանուհիք՝
 Кавалеръ-дама են դառել,
 Կոյս-օրհորդ վարժուհիքը—
 Հինգ անգամ мама են դառել.
 Վերակացու мадам-ները—
 Չորացած չամայ են դառել.
 Ուսման ցամաք բուրաստանում—
 Մի նոտանէտ վարդ չտեսի:

Оперетка, փրքե էլ մըտի՝—
 Այնտեղ քէֆ ու խորտիկ չկար,
 Մեղի, տրոփաւէր անձերից գատ՝
 Մէջը կարգին մարդիկ չկար.
 Երգչուհիքը բեմ դուրս եկին՝
 Նորանց հագին վարտիկ չկար,
 Ոտից ցզլուս արնտրդեցի—
 Մարմին ծածկող զարդ չտեսի:

Հայո՞ց թատրոն, հայո՞ց թատրոն—
 Դատարկ դահլիճ, մերկ լոժաներ,
 Կենդ ու հատիկ սիրողներով
 Բաղդաւորած նրստարաններ.
 Աղասաղած հայոց լեզու,
 Գոռոզամիտ դերասաններ,
 Որոնց շարքում—մի Աղամեան,
 Մի քաղցրախօս նարդ չտեսի:

Գագեթաչի աղաներիս
 Հետն էլ մի կերպ ծանօթացի*)
 Եւ ամենի չիքն ու բուզը,
 Դատանները պարզ հասկացի.
 Իրար արին էին ծըծում,—

«Հացի խրնդիր է», սպասելիք էր հասարակ-դայուս քէֆը քօրէր Բայց Հաջուն անդարդ չտեսի:

Հիանդ էի եւ դիմեցի
 «Անարծաթ» հայ «բրժիկներին».
 Նորանց տեսած՝ բիր փառք տըրի
 Մեր փաստաբան չարչիներին,—
 Գրքականիս վային նրստեցին,
 Հոգիս ու մարմինս կերին.
 Գորանց նրման անկուշտ տրզրուկ,
 Արին ծրծող սարդ չտեսի:

Դողդողալով այց գընացի
 Գուսակցական տականքներին,
 Որոնք գերել են խուժանին,
 Կուզեն տիրել եւ վանքերին *).
 Շա՛տ վիճեցիք... բայց երբ աչքս
 Ընկաւ նորանց թիֆանգներին՝
 Կամա՛ց դարանիս թըրեցի,—
 Փա՛ռք Աստրծոյ, ջարդ չտեսի:

Աստածհաճոյ հաստատութեանց
 Վարիչները դանդաղ էին,
 За то՛ նորանց պատասնեքը՝
 Գրքականները խիստ չաղ էին.
 Երեսփոխան թէ՛ զանձապետ—
 Հաշի տարում շատ կաղ էին.
 Ազգի խոպան անդաստանում—
 Մի կանաչած արտ չտեսի:

Ամբողջ Թիֆլիսը ման եկի՝
 Շալարատը կին չերեւաց,
 Գեօզալ Աղարաջու նրման՝
 Լրարստած տիկին չերեւաց.
 Մարգար-ամուս դալայելու—
 Մի ժանգոտ խալգին չերեւաց.
 Սամոնի պէս ճարպիկ մարդորս,
 Կարթին նրման—կարթ չտեսի:

Վերադարձիս մտի Բագու՝
 Այցեկցի Թաղիեփն.
 Նա վրրծինը ձեռքին քրոնած՝
 Ընթանկ գոյն էր տալիս ս ե լ ի ն,
 Ամեղ մարդին—չար սատանայ,
 Սուրբ հրեշտակ էր շինում—դեփն.
 Դրժոխային այդ քաղաքում—
 Նորա պէս կախարդ չտեսի:


Վազոնի մէջ պտուկած էի՝
 Աչքիս եկաւ մի անուշ նինջ,
 Բայց Մորիէի կաղաղ գոգից,
 Կոստուրքօրը դուրս հանեց ինձ.
 Աչքս բացի,—մեր տա՛նն էի...
 Եւ յիշեցի ամենայն ինչ.
 Շա՛տ չափեցի, շա՛տ ձեռեցի՝
 Ինձանից լաւ մարդ չտեսի:

Լ.Կիպուրի



*) Գլուխս քարովը տւի, երեսս էլ—պատուր. ոչ էի ծանօթացել: Ծան. հեղ.

*) Նրանց թուում ե՛կ եկեղեցիները: Ծան. հեղ.




«ՕՏԱՐՈՏԻ» ՄԱՐԴԻԿ

Ոստիկանական պաշտոնեայ.—Ասիբ, այ տղայ, երբ որ սրանք եկան հիւրանոց ու համար վարձեցին՝ արդեօք «օտարոտի» բան չէին անում:

Սպասաւորը.—Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ, օտարոտի շատ և օտարոտի էին. երբ եկան, իսկի չհարցրին թէ համարում քաղվինջ կամ լոմներ չկան—այնինչ, ուրիշները հարցնում են և հետաքրքրում այդ մասին:

—Ը՛հը՛, հասկանալի է. նոյն իսկ քաղվինջի ու լամների մասին չեն հարցրել. «օտարոտի» մարդիկ են եղել:



ԳԱԶԷԹԱՋԻ ԱՂԱ ԶԱՆ

Ամսուս 17-ին մաշինով հասանք Թիֆլիզ, հրամանքիդ տեսանք, հարց ու բարով էրինք. «բարով իս էկիր, սաղ էդնիս» յիւրար ըսինք, մերոնց ձերոնց հալ ու քէֆը հարցրինք, առանց հրամանքիդ մնաս բարով էնելու Թիֆլիզից փախայ, չունքի համ բաշորոզ չունէի, վախեցայ բունին, ինձի տանին պօլիցան դալային, համ էլ, խոտտովանանք էդնի, մկնները ջէպս ջիրիդ էին խողում. գաստինցի տէրն ալ, Ասուած գլխէն վերն սաղ պահէ, անպէս ըշշոտմ գրեց յառջններս, օր յաշններս լըբ բացինք. լաւ խուզեցին, դալայեցին, յետև բաց թողին: Մոմի փարայ, սապնի փարայ, ջրի փարայ, բաշորոզի փարայ, փէշքերի փարայ, նօմերի փարայ, ծառայի փարայ, շեցարի փարայ. ծօ քիչ մնաց թէ յոտաց ճանապարհի փարայ ալ առնին: Հիմի յիմօցմը, հասկցար դարգս, թէ ինչի՞ «տեսանելի փախայ»: Հիմի մեր ճամբորդութենը գրեմ: Օղորդ է վագոնի պատին գրիր ին թէ քանի մարդու տեղ է, հմը բիլէթ ծախողը ատիկ չի հասկընայ. շատ ջումբը է. ուզողին բիլէթ կուտա կը. ու վեր վարէ կը. վագոնին մէջ տեղ կայ, չկայ, ատիկ հարցնող չկայ: Վե՛վ դոռաք է, թէ՛զ վագոնց վագոն մտաւ, իրեն տեղը սարգեց, դինջացաւ. վե՛վ օր խեղճ է, բաշարմազ է, յուշ հասաւ, թող տէյմօր լուս պատերուն տակը անքան կայնի-օր յոտմները սև շուր յիջնի: Իլլաքիմ տրէթի կասը, ինչ չեշիտ ջին ու ջանավար գուզիս աստեղ յիւրար վրայ լցւիր ին. վերը կըխնջէ, վերը կըթքէ, վերը հարբիր է, հեռի լսողաց կըզոայ. եաքի գիւված խաղ կըսէ: Թամամ Նոյ Նահապետի տապանն է դառիր: Չիմ գիտէր, տեսիլը իք բոչկաներուն մէջ սիւրտական ինչը շարին կը. ըշտայ տրեթի կասն ալ ատպէս շիտակ սիւրտակի բոչկայ է: Չանմ ատ բիթունին դաբուլ էնինք, եօլայ էրթանք. հիմի արի տես, օր քոս ծղղատնայ յընկայ երկու խանումի մէջը: Չանմ ատ խանումները ցիրկի կալի չափ շեփաները դրիր էին գըրխնըրուն, արշին ու կէս ըշպիլկաներն ալ աս թարափէն կոխիր, ան թարափէն հանիր էին. քիչ կըմնար թէ ատ յանտէր մախաթները յանկաջ ծակէր, եա յաշքս հանէր: Տունը քանդակ մօղայ իջատ էնող: Հարնայիսա յանկջներուս յաշններուս մուղաթ կենալով էրկու խանումին մէջտեղը կգկթելով հասանք Թիֆլիզ: Պրասպեկտին վրան գեադմիշ գլխիմ կը. տեսնիմ խանումին մէկը դոշայ քթոցը գլխը կոխիր, կաքաւի պէս մանտը մանտը քալէ կը: Ես անպէս զաննը էրի թէ ատ կնիկը ուլիցը չափէ կը, օր յիմանայ թէ, քանի ոտ գլխի կը: Կողքիս մարդուն հարցուցի, ըսաւ, ուստա Մարգար, շատ եանպիշ իս, ուլիցը չի չափէ, դարիի ներքը անքան նեղ է կարիր, օր արթի կանտալայ դարկած արեստանտի պէս յոտմները չի կընայ լան-լան բանայ, ատոր հմար ալ ատպէս մանտը քալէ կը: Չանմ

թող արշին մալ էւելի առնէր, լան կարէր, արբ ինչի՞ ատքան նեղ է կարիր:

— Ուստայ Մարգար, չիմ գիտիր խանիմ կը քանդիս թէ՛ օղորթ գեօրմամիշ իս. մախսուս նեղ է կարիր. հիմի ատիկ է մօտայ. ատպէս նեղցնելով, նեղցնելով, քիչ քիչ շաւար դարձնեն կը: Վա՛յ մօղայ մօղոնող, տունը քանդակ, բրիշակ յըլի. աս ի՞նչ չեշիտ խայտառակ մօտաներ իջաթ կենիս: Ախ ատ կնիկ մարդիկ յերեսները ներկին, ջաղցի քարի չափ շեփաները դնեն. դարիէքը նեղցնեն, շաւար շինեն, մօղայի յետևէն վագին, գուզին զարդարին, սա, տղամարդկանց դուրս գալու համար: Չանմ թէ օր կնիկ մարդը անդուր է, չեշող է. գէշ է, ինչ չեշիտ յուզում է թող գուզի. դենայ էրիկ մարդուն դուր չի գայ: Սիրունը հին շորերի մէջ ալ սիրուն է:

Ղալայի Մարգար



ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐԱՃԱՃԱՆՉԱՓԱՅԼՈՒԹԵԱՆ ԿԱԼԱՏՈՒՉ ԳԱՍՊԱՐԻ ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԽԱԹԱԲԱԼԱՅԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յոյժ կարևոր գեկուցում ի Դարբանդ քաղաքէ, ի կողմանս Կասպիական մեծ ծովու:

Երկիւղածութեամբ ընթերցաք զպաշտօնական հրամանն ձեր ի մէջ «Սաթաբալայի» ընդ № 22, որով խոտագոյնս պատելիք զգեկուցանել ձեզ ի մասին ազգային դրամոց:

Քանզի յոյժ խառնափնթոր է գործն գորմէ գեկուցանեմ, ուստի պարտ է ձեզ լինել համբերող և բացեալ զանցքս ականջաց ձերոց լսել զպնելս վասն գողորշիացեալ փողոյն դպրոցին Դարբանդու:

Էր երբևմն յորժամ դպրոցն Դարբանդու ունէր գումար ինչ դրամոյ և հոգաբարձուք արժանավայելք, հաստավիզք, լայնափորք և լայնաջէքը նոյնպէս և բարակավիզք, որք ձգնէին վասն պայծառութեան ազգիս:

Ի վախտին ժամանակաց փակման դըպրոցաց, յորժամ ամեն ինչ իրար խառնեալ էր, արդարացուցանելով զսոսածն, թէ «գայլն ամպ օր խնդրէ, գողն մութ գիշեր», ոմանք ի հոգաբարձուացս ախոցիկ, թերևս և խումբն ամբողջ, գտեալ պատեհ առիթ՝ անյայտացուցին ազգասիրաբար և փողասիրաբար զգրամս ազգին: Որպէս կատուք գողք մաքրագարդեցին զգանձս դպրոցին և լպտեալ զմութիս իւրեանց զրազ քաշեցին:

Սակայն գտնեցան արք ամբարիշտք, որք շարունակ բօթբօթէին զկողս աւագակաց, զի զկերեան յետ թափիցին: Սակայն զպուճակս (պարանոցի ետևի մասը) թերևս տեսանեն, բայց զկուլ տեալ փողն ոչ տեսանեն, քանզի բողազքն կողոպտողաց որքան և լայնանան ի վախտին յափշտակութեան, սակայն ի վախտէն ետ տալոյ յոյժ նեղանան և փակեն ծակունքն բողազաց, զհոգիս

իւրեանց տան, զփողն ոչ տան: Յափշտակողքն շատ ձգնեցան զկերտարն մարսել, սակայն անպիտան ոչ ու փուշքն ոչ թողին էլի: Չօտով շառով կեռ ու մեռ չանգեալս կամին մտուցանել ի բողազն յափշտակողաց և զկուլ տեալ փողն յարտաքս քաշել:

Այրք ամբարիշտք, որք ոչ սարսափին նդովիցն Սպանդուկունոյ, ոչ հաւատան անկեղծութեանն Կոստանդնի Ղաղարու, քունջ ու պուճակ ընկեալ՝ մէյդան քաշեցին զհին դաւթարս դպրոցին և հաշեալ ի վերայ ուսական շխշխկոցի՝ գտան զքանակ կուցեալ դրամոցն, որ է 964 բուպլի և կուպէկունս:

Դաւթարքն հանդերձ հաշուվք յղեցին առ թեմական խորհուրդն, զի դործոյն ընթացս տացցէ յոյժ շտապով և զկուլ տեալ դրամն զքիցն և զբերնից աւագակացն բերիցէ: Անցեալ է սակայն ամ մի և ոչինչ կարգադրութեան կայ: Երևի խորհուրդն ի ձմեռային չլայ մտեալ է և դեռևս չէ զարթուցեալ: Արդեօք ի՞նչ ասէ երևելի եթերաբան պ. Չմշկեան: Բաւական տաքութեան հասեալ է և կարող է տաքութեանն այդ զարթուցանել ի քնոյ մեղաց զթեմական խորհուրդն:

Նինջն այս յոյժ զարթացուցանէ զՍպանդուկի քահանան և զգործակիցքն իւր: Հանապազ զձեռն ի վեր կարկանդակ խնդրեն յԱստուծոյ, զի աւելի ևս խորացի նինջն թեմական խորհուրդն: Մենք յայս կտրեալ ենք խորհրդէն և սպասեմք կարգադրութեան Ձերդ խաթաբալայական մեծութեան: Արդեօք չէ՞ արժանի ներկել զդոսս ամենագոր ներկիւ «Սաթաբալայի»: Գուցէ թէ ամաչեսցեն և զդրամն կամօքն իւրեանց յետ տայցեն և թորան արացեն այլևս չգողանալ զհագար ու մի շառով ժողովեալ փողն դպրոցաց:

Պիծակ



ԵՐԶԱՆԻԿ ԿԻՆԵՐ

Առաջինը.— Իմ ամուսինը միանգամայն սիրահար է մուզիկայի,— իսկ նրա այդ թոյլ կողմերից ես մեծ օգուտներ եմ քաղում:

Երկրորդը.— Ի՞նչպէս...

Առաջինը.— Երբ ինձ հարկաւոր է լինում գնել սեզօնի համար մի որևէ առարկայ, կամաց մօտենում եմ դաշնամուրին և ըսկսում եմ նւագել նրա սիրած մեղեդիներից մէկը. այն ժամանակ նա, հիպնոսացրած մարդու նման, լուռ լցուցանում է իմ ամեն մի պահանջը:

Երկրորդը.— Է՛, իմ ամուսինը աւելի լաւ է. հէնց որ ուզում եմ մօտենալ դաշնամուրին, իսկոյն պօրտմօնէն հանում և հարցնում է. «Նոգեակս, քեզ ի՞նչ է հարկաւոր»:

Մ Ա Հ Ե Ր Ք

Թոյլ ու անկենդան, թախծոտ ու մենակ Աքսորւած եմ ես հեռու աշխարհում, Սև վիշտն ահաւոր, ցաւերն անքանակ— Ելնում են խոցւած սրտիս մէջ յաճում Անկոնշա ու անհոն:

Շուրջս խաւարն է սքողել տրտում՝ Իմ վիշտն ու ցանք գրկած իրեն հետ. Սգուր ու շրջիկ քամին անկշտում՝ Իմ հառաչանքը տանում է յաւէտ Լալկան ու անքոն:

Ու չորս-դիս տնքոց, կատաղի քրքիշ. Մոայլ խաւարում, ժայռերի կրծքում՝ Երկունքով բռնած չարքերն են անվերջ Իմ խաւար կեանքի տանջանքը ծնում Ցաւերով լեցոն...

Շարգիզ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Առարեալ Բարա-Գասպար կոչեալ զրազէտին

Սիրելի գաւակ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցոյ: Քանզի մեք հաւատամք անկեղծ կարծեացն ձեր, թէ «ի մէջ երակաց քոց հոսի ազգային արիւն», ուստի վստահանամք առաջադրել ձեզ կար-

Ֆ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՊԵՐՈՎԱԿԻՐ ԲԵՔՈՒՆԸ

(Շիրվանզադայի «Արմէնուհին»)

Իմ ազիզխալֆ տիպէրացու Քեասպար Կարապետ զօվեանցին մի ջուխս պոռտի «Արմէնուհու» սպեկուռնայ շամախեցի այրի տիկին Կեօզալ Աղաբաջիից:

ՔԵԱՍՊԱՐ ԶԱՆ.

Թուրքի առակը ասըմ ա. «հեամաշա Շարան, բիր գիւն դա Ռամազան»... եանի անքան մեռած ամ քի, աս հայի մատենախօսութունն ալ չամ կարիլ կերիլ... Հինչիբ բանաստեղծ թուամնովը առաջնորթող կը կիրի, համմա ես մատենախօսութիւն չամ կիրիլ, հինչիբ Լիօնը թութի դուշի պէս օրը մին ջուռա գին-մեասար կըփոխի, ես չամ կարիլ, ախրը հինչիբ հէանց Շիրվանզադան համ պատմութուն կը կիրի, համ թատրոնի կիր, համ ալ առաջնորթող կիրող կիրի, համմա ես սուս կանամ... Ձէ, չէ, Քեասպար ջան, ես ալ ամ կիրիլիլ, հինչիբ կլօխըս մտաւ, ալիւստի դեալամը ցէքս ամ առնիլի կիրամ, նրանցանայ պակասը հիմ ա, շատ ալ ես կնիզ ամ, ագանամ կնանիքը չիլին, աս մարթիգերքը հորտեղան կինին...

դալ 20,000 էջեան գրածքն, որոյ մէջ պարզ երևի, թէ՛ Օրմանեան սրբազանն չէ դաւաճանն, այլ բազումք յայնմ գործչաց, որոց ցարդ դուք զխունկս և զկնդրուկս ծխէիք և ձգնէիք խօթիլ ի մէջ ազգային գործոց: Խորհուրդ տամք զձեզ կարգալ նաև գրածքն հանգուցեալ Վարդօ գրագէտին, ուր բացորոշ երևին այլանդակ երեսք բազմաթիւ ինքզինքն գործիչ համարողաց: Վրատահ եմք, զի անկեղծութիւնն ձեր, որպէս յետ հոչակաւոր «համագումարին» էջմիածնի, խոստովանեցաք, թէ հայկեան արիւն հոսի ի մէջ երակաց ձեր, այնպէս և այսօր, յետ ընթերցմանն «քսանհազարեակ»-ին, խոստովանէք անկեղծօրէն, թէ հիջք են գործինք և ոյք՝ դաւաճան:

Մնամ ազօթարար
Ճնորիկ ծայրաբեղ աքեղայ

Ի Գ Ի Լ Լ Ի Ա

Նէ այց է գալիս ինձ ամեն գիշեր, Իր սովորական երգ ու կատակով, Եւ չարածձի գովերն ու զեփիւս Հիացած մեր լուս, սիրահար հոգով Սուլում են հանդարտ Մեր սէրը անլուր, Չխանգարելով Մեր երգն ու համբոյր, Մեր պատանեկան գրկախառնութիւն, Մեր հեքն ու շունչն—այդ անուշ պահուն:

Մատենախօսութիւն

Շիրվանզադա, «Արմէնուհի» թատրոնի և անբեղ գերասանների ու անարուս գերասանուհիների համար: Գինն է յիմարների համար ինչքան քէֆներն ա, խելունքների համար հաւայի, հովքի կարթի, ոտով կը քինայ Նաւայի:

Բովանդակութիւն

Սամսոն անըմով մին դոլլաթտիւ հայի տղայ, ունի պառաւ մայր Աղսպետ (Եղիսարէթ) անըմով, ունի մին քիւր Վառթուհի (Վերգինէ) անըմով, որը փսակած ա Ստեփան անըմով մին դոլլաթի հեանան: Սամսոնը պսակըմ ա աստաֆկա տւած մին սալղաթի մեծի ախչիգ Արմէնուհիի հեանան, Արմէնուհու մայրը ողորմած հոքի ա, հայրը սաղ սալամաթ ա: Կլօխներթ հինչ ցաւացունամ, Սամսոնի կնիգ Արմէնուհին դալիբան տիւս ա կեամ լօթի, Սամսոնը խելունք առուտուրական, մէրը՝ Ալսապետը և քիւր Վառթուհին՝ նա մուսով, խելունք, իրեաները տունի կնանիք: Սոմսոնը, դէ հինչքան իլի, տղամարթ ա, առուտուրով կլօխը խառնը, նաղդ, նիսեայ առուտուր անող, մին չինոֆիլիգի կնգան նիսեայ ապրանք ա ծախալ, համմա փողը առնիլ չի կարացալ, սկսալ ա եաւաշ-եաւաշ քիսալ գոստինցայ, ապրանքի փողը կիւտ անիլի:

Եւ բերում է նա իր հետ յիւրեան Անցեալ օրերի յուշերն իմ Քիւրտոյցն Մի ամբողջ աշխարհ—սէր ու սրբութեան, Խարուսիկ կեանքի մի բոյլ անուրջներ...

Իր բիրտ կենընկեր
Կրէսոսին թողած
Անքուն ու անսէր
Մահճում մենացած,

Հանգչեցնում է իր սիրատապ լանջին Գլուխս յոգնած մինչև լուսաբաց:

Սիրուն սրիկայ. ասում է նէ հէզ, Հաճելի կեանքի այն ճոխ հանդիսում, (Ուր նետել է ինձ մի այլ մարդու ձեռք) Նորից դու ես իմ վայելքն ու ցասում...

Եւ թաթիկներով
Իր ճերմակ, փափրիկ,
Այտըս գունաթափ
Շոյում է հեզիկ,

Ուհ... սակայն նորից երկուսս էլ անյայտ, Մի լուս կարօտով լալիս ենք վհատ Կարիկ

ՀԱՅԱԹԱԿՈՐԳԻ


(Փրանսիական երգիծանք)

Պարոն Օսալյը Մարտէնն արդէն կասկածից դուրս էր համարում այն, որ իր կինն իրեն խափում է:

Եւ եթէ նրան հարցնելու լինէին, թէ

Արմէնուհու հայր Կարապետն ալ (կոստանդին) հինչպէս առանց կնիգ մարթ, Սամսոնի տունումը (փեսի, աղչիգան մօտ) լաւ ուտում-խմում ա, խոզի պէս հաստանըմ, եաւաշ-եաւաշ քինամ ա Սամսոնան նիսեայ ապրանք առած չինոֆիլիգի կնգան մօտ: Պեանը ան տեղի ա հասնում քի, փեսա-հաներ տրանք ոստ ան կեամ... Դէ խօսք չկայ, քի չինոֆիլիգի կնիգը Սամսոնին ա շատ ուխաժւատ անիլու, չիւնքի համ հարուստ ա, համ ալ աշկըմը ըըը կայ, համմա իրա հաներ Կարապետը քեօփազած, կլիսի մագերը թափւած, կեօիքները սեացած, ջիբին ալ մուկներ ա պար կեամ: Հէնց իմանանք չինոֆիլիգի կնիգը չի, հէանց ես ամ, Սամսոնին թողացած Կարապետին ամ սիրիլու...

Կարապետը շատ ա փիքը անըմ քի, հինչ պլան քաշի, որ Սամսոնը ոտը գաստինցիան կտրի, ախչիգան խաբար ա տամ, քի նշանածթ սիրական ա պահըմ... Դէ Սամսոնի կնիգ Արմէնուհին ալ շատ գեօյազ ա, հինչպէս ասըմ ա Շիրվանզադան: Քաղաքընն ալ եաւաշ-եաւաշ ձեան ա ընգնում քի, Սամսոնը նիսեայ տւած ապրանքը չինոֆիլիգի կնգան հեանան կիւտ ա անըմ... Աս մաղամըմ Սամսոնը մին թեազա տուն ա ուզում շինիլ տօյ, կանչըմ ա մին ինժնար, Համանակ անըմով: Աս չիւած-չպտկւած ինժնարը իրան կնգան՝ Սիրանուշին թողած սկսըմ ա թոլամիչ անիլ Արմէնուհի չիւ-



«Կինը վաղուց է ինչ քեզ խափում է», նա անմիջապես, ամենայն վստահութեամբ կը պատասխանէր «երէկեանից»:

Նրա կինը յանկարծ միանգամայն փոխուում է:

Տիկին Ժիւլիէտ Մարտէնը իր ամուսնուն տեսնելու բաւականութիւնը վայելում էր միայն առաւօտեան նախաճաշիկի և ճաշի ժամանակ: Լուրջ գործերը կրնում էին գեղեցիկ կին ունեցողի ամբողջ ժամանակը և չէին թողնում նրան տանը իր կնոջ կողքին նստելու:

Թէև ամուսինների տեսակցութիւնը շատ կարճ ժամանակ էր տևում, բայց պ. Օսուայլը Մարտէնը հիանալի կերպով նկատում էր, որ կինը ախրում է: Վերջինս ճաշի ժամանակ յաճախ լալիս էր՝ իր բաժնէմանի մէջ արցունքներ թափելով, կամ թէ լուում էր՝ ձայն-ծայուտ իսկ չհանելով: Երբեմն նա դառնագին գանգատում էր իր դառն վիճակից և աղբսում երկնքին, որ նա սփոփէ իր դժբախտ կեանքը, որ կապուած է իր կնոջ վրայ ոչ մի ուշադրութիւն չգարձնող մարդու հետ:

Ամուսինը նրա հետ ոչ մի տեղ ոչ հիւր էր գնում, ոչ թատրոն և ոչ էլ նրան էր թոյլատրում միայնակ որևէ տեղ գնալու: Բռնակալ, անգութ, անսիրտ եսամոլ:

Երէկեանից տիկին Մարտէնը յանկարծ կարծես թէ վերածնել էր: Նա ուրախ էր, ինքն իրան ինչ որ երգում էր, ամուսնուն գուրգուրում, գլխովը պտոյտ գալիս,—մի

խօսքով՝ այնպէս էր փոխել, որ պարոն Օսուայլը վճռեց, որ կինն իրեն խափում է:

Այդ օրը նա՝ տուն ճաշի գալուց առաջ գնաց ու իր համար ատրճանակ գնեց, ապա աշխատեց սովորական ժամանակից շուտ վերադառնալ տուն:

Վերադարձած ամուսինը՝ տան սանդուղքը բարձրանալով՝ ինքն իրեն հարցնում էր, թէ իսկապէս հիմն է սպանելու. իր յանցաւոր կնոջը, թէ՞ նրա սիրեկանին:

Նա անկասկած դաւանանունը գտնելու է է գայթակղեցնողի գրկում:

Տան դռանը արագ մտնելով՝ նա կանգ առաւ ու սկսեց ականջ դնել: Նրա բնակարանից լսելի եղաւ երաժշտութեան ձայն. մէկը ջութակի վրայ ամուսն էր:

—Աստ. նա երաժիշտ է,—մտնաց պ. Օսուայլը, ատրճանակը լցնելով. —Աւելի լաւ:

Երբ որ նա բանալին ձխեց դռան փեղկի մէջ՝ երաժշտութիւնը դադարեց:

Բայց իսկոյնեւ էլ՝ երգ սկսեց:

Նրա հակառակորդը սիրահարական երգ էր երգում:

Նրա ձայնը քաղցր էր, քնքոյշ, գուրգուրող բնոյթով...

Ուրիշ հանգամանքներում պ. Մարտէնը բաւականութեամբ կը լսէր այդ երգեցողութիւնը, որովհետև նա իրան համարում էր երգամոլ:

Նա այժմ չէր ցանկանում հակառակորդի երգեցողութիւնը լսել. կամացուկ մտաւ նա-

ծին և եւաւաղ-եւաւաղ քիցիւմ ա իրան թոր...

Արմէնուհու սկեսքը, տալը դոյմիշ ան իլիմ, Համեակի և Արմէնուհու բուխսունը պահում ան, ծեանը հասնում ա Սամսոնին, Սիրանուշին, ընգնում ա դալմաղալ, Սամսոնը աղաչում, պաղատում ա Արմէնուհուն, որ ինքը չի նոյնիքի կնգան տարած նիսեայ ապրանքի համար ա կոմքինացի սարքալ, կիւիտ արալ, վերթում ա ուտում՝ ալ աթանց դալաթներ չի անի, Արմէնուհին ալ ասում ա քի, հս սիրիմ ամ Համեակին...

Մին խօսքով Արմէնուհին ալ, Համեակին ալ թողնում ան իրանց արախորքոնց, զաւակներին, փթաթում ան մինը մինի վիզով դուշ-պաշ անում, մինը մինի մօտ սիրական մտնում՝ Արմէնուհին իլիմ ա Համեակի դուշինկան, Համեակը Արմէնուհու մուծիչկան, գիւս ան կեամ կորչում զաղբանիցա:

Պրծաւ, քինաց: Ետով փեարդայ վարաքոյրը քաշուման, թատրոնը պրծնում ա:

Հիմի տեսանք աս Շիրվանդադան հի՛նչ ա ասում:

Ախի մին մարթ քի մին պատմութիւն ա կիրիմ, մին դալաթ ա անում, նա իրան կիրածին մին անանց մըտկ ա տամ, որ կարթողը, տեսողը ինքն ալ սովրի:

Շիրվանդադա չիւածը իրան «Արմէնուհի» կիրածով հայի կնանիքոնց, ախչիգերքոնց սովրացնում ա շառլատանթուններ:

Շիրվանդադի ասելով աթանց բիդի իլան մեր կնանիք-ախչիգերքը: 1-ինը՝ ախչիգը որ մեծացաւ, եաշը իլաւ 15—16 տարական, քանի քի իրեսըը սուրփութուն կայ, բիդմա փոսկան, աւետարանի ասածի պէս՝ «կուսըթ կուսոյ» նշանածի երեսը տեսնի. նրանա ետով քի մեղը ամիսը անց կացաւ, ուրեմն, Շիրվանդադի ասելով, իրաւունք ունի շլաղ տալ, «իդէալական» սիրի, «գեղարւեստական» սիրի, «բնութիւնով» սիրի, «Փօրտապեանով» սիրի, ալ ես հի՛նչ իմանամ հի՛նչ ջահանամով—գեոռով սիրի, հինչպէս Շիրվանդադան Արմէնուհին ա սիրիլ տամ Համեակին...

2-րդ՝ Շիրվանդադան մեր կնանիքոնց, ախչիգերքոնց սովրացնում ա քի, ագանամ փոսկեցին, արախաներ իլաւ, կարող էք ծեր արախորքոնց թողնիլ և ուրիշ տղորքոնց մօտին սիրական իլիլ, հինչպէս ինքն ա արալ:

3-դ՝ Շիրվանդադան ասում ա քի, սկեսքը, տալը իրաւունք չունի հարսին խօսք ասիլի, սովրացնի, հակացնի, հարսի սխալները գիւզացնի, տունի սար ու կար սովրացնի, չիւնքի Արմէնուհին առօտան մինչև իրիգուն չախկալի պէս մէշաներընի ա ման կեսամ, սարերի, քուրի տակին ա իլիմ, չայի (կեր) դրադին նստում ծիւգնը փոնում, ալ չի ասում քի՛ ինքը տունի չիլած հարս ա, տունի սարք, կարք անի, խորագներ հեփիլ տայ, իրան արախի հետնան հաղ ա-

խասնեակը և՛ կօշիկները (համարում) քանտուկ մօտեցաւ: կնոջ սեղանին, ՈՐՈՇՅՅՅ

Մի վայրկեան դռան առաջը կանգնելով՝ նա արագ բացեց այն...

Տիկին Ժիւլիէտ Մարտէնը խաղաղ նըստած էր բաղկաթոսի վրայ՝ գործածքը ձեռին, իսկ առաջը՝ աշխատելու սեղանի վրայ՝ դրած էր հէնց նոր գնւած գրամմաֆօնը:

Մի քանի վայրկեան կինը շարած նստում էր ամուսնուն...

Վերջինս այնքան ծաղրական գրութեան մէջ էր՝ ոտքերին միմիայն գուլպաներ, ատրճանակը ձեռին, զգզած մազերով, իր գէս ու գէն ընկնելովը, որ երիտասարդ կինը մի կուշտ՝ բարձրաձայն հնչուաց...

Քարգ. Վ. Բարուհան

ՍԵՄԻՆԱՐԻՍՏԵ ՈՒ ԻՐ ՍԻՄՊՍՏԻԱՆ

Սեմինարիստը նստած իր սիրունու հետ Արտիստականի բուֆետում լուռ ու մունջ հիացած նրա աննման գեղեցկութեամբ՝ նայում է նրան: Օրիորդը պիմնազիստկա է և հայերէն ոչ միայն չի խօսում, այլ և ատում է նրանց, որոնք այդ գեներիկ լեզուով են արտայայտւում: Սեմինարիստը քաջ գիտակցելով, որ իր սիրունու սիրած լեզուն ուսերէնն է՝ աշխատում է ամեն կերպ դուր գալ նրան, իր գիտցած ուսերէնի ամբողջ պահեստը բանալով նրա առաջ: Մի փոքր ժամանակից յետոյ օրիորդը թէյ է պահան-

նի: Համմա գէ ախմախի ախչիգ ախմախը քինում էր սարերը, քուրերը ընգնում, հինչա քի Համեակին տեսնի, պոռշտի անի, դուշ անի, շառլատանթիւն անի:

Շիրվանդադան իրան «Արմէնուհի» մէջին համ Համեակին ա թարիֆ անում, համ ալ Արմէնուհուն: Նա դրանց թարիֆ ա անում, որ երկուսն ալ իրանց նշանածներին ծախում ան, ամուսնական սրփութիւնը ոտի տակ ան քիցիմ:

Համմա Շիրվանդադան ագանամ ինքը միդ մարթ իլի, իրան պատմութունի մէջին բիդի բիարուռ անի, որ նրանք կեղտոտութիւններ ան անում:

Իմ մասլահաթս ա, որ աթանց թատրոնները, հինչպէս «Ամէնուհին» է, մեր տղամարթիգերքը իրանց կնանիքոնց, ախչիգերքոնց չթողնան քինալի, կնանիքներն ալ իրանց մարթիգերքոնց չթողնան, չիւնքի աթանց կեղտոտ Արմէնուհիները, Համեակները, Շիրվանդադի պեարանով, հայի կնանիքոնց սովրացնում ան ուրիշ մարթի վերայ սիրահարելի, տղամարթիքին ալ սովրացնում ան՝ ուրիշ կնգան վերայ աշք տինիլ...

Տա բիարուռութուն ա, ֆոանցուգը աթանց դալաթ չի անիլ:

Մնամ քիդ թամարգու բու բիւրացու՝ Գեօգալ Աղարաշի

ջում ու մեր սեմինարիստը կանչում է աֆիցիանտին—նախօրօք որոշելով թէ՛յն էլ ուսեբէն պահանջել: Մօտենում է աֆիցիանտը, բայց մեր սեմինարիստը չի իմանում ինչպէս դիմի՝ վախենում է, որ յանկարծ սխալի և խայտառակի օրիորդի մօտ:

Մտածում է, մտածում, բայց չի կարողանում որոշել, թէ ինչպէս պէտք է յայտնել. «два стакана թէ՛ двѣ стакана»...

Ու երկար ժամանակ մտածում է ու մըտմըտում. «два стакана, двѣ стакана, два стакана, двѣ стакана... Եւ յանկարծ գըտնում է հնարը: Պատերում է մօաը կանգնած, իրեն նայող և ապշած աֆիցիանտին, որ բերի «три стакана» ու երբ վերջինս բերում է «три стакана» մեր սեմինարիստը կատաղած պրոտմ է. «дуракъ, одинъ стаканъ бери обратно: Ու այս էդիտոնեան հնարագիտութեամբ կարողանում է և երկու բաժակ թէ՛յ պահանջել և օրիորդի մօտ շխայտառակել:

Փիւսնքեցի



Լ Ե Ց Ի Կ Լ Օ Պ Ե Գ Ի Ը

(Տե՛ս Խաթարալա № 22)

2.

Ձն հայերէն այբբենի 6-րդ տառն է և պէտք է ասել, որ դա բոլոր տառերից ամենամաքախոսն է: Կար ժամանակ որ դա էլ շքեղագարդ հարսի պէս հաղար ու բիւր պճրանքով գործ էր ածուում բառերում. բայց հիմա մօղայից դուրս է եկել և տեղի տւել անիրաււին, անաժօթ ուին և անպատկառ վին:

Ձրօ եւ զէթ (O + Z, X-ի եղբայրը).—Նշանակում է՝ ոչինչ և անյայտ: Առաջինը գործ են ածում, երբ ուզում են իմանալ թէ Սեդրաք Մանդինեանի բողոքները ինչին են հաւասար, իսկ երկրորդը՝ երբ ուզում են իմանալ թէ խաթարալիստ Բախշօն ձւր է գնացել:

Ձբօսանք-գբօսարան.—Ծառագարդ տեղ, որ ներկայացնում է տղայ-աղջկայ ժամանակաւոր կարմիր սենեակը:

Ձօնտիկ.—Գործիք անձրևի և արևի շա-

րիքներից ազատ պահելու համար: Գիտնականները աշխատում են հնարելու մի համանման գործիք, մարդկանց՝ մի քանի խմբագրատների շարքներից ազատ պահելու համար:

Ձարկ.—Գողութեան վարձատրութիւնը:

Ձիբիլ.—Հիւանդութեան արմատը. ամենից շատ ճարուում է չլէնների և ձայնաւորների բակերում:

Ձարար.—Հարստանալու ձևականութիւն:

Ձարնումար.—Փաղաքշական բառ: Սրան շատ էր սիրում լուսահոգի Դանիէլը:

Ձատիկ.—Երջանիկ օր, երբ քրիստոնեան յիշում է եկեղեցին, իսկ թշնամին՝ իր բարեկամին:

Ձանգակ.—Փողոցների աղմուկները հանգստացնող գործիք: Դրա գործածելը ամենից շատ սիրում է Տիգրանեան Յովհաննէսը:

Ձի.—Գրաբար խօսք է և սխալմամբ առաջ է եկել ձի բառից: Սրան աւելի շատ սիրահար է «Հովիտի» խմբագիրը, մանաւանդ երբ յիշեցնում է վանքի փողերի մասին:

Ձաւակ.—Սկզբներում—սէր, միջերում—գարդ, իսկ վերջում—ցաւ ու կրակ: Երանի այն ընտանիքներին, որոնք ունեն այդպիսի զաւակներ:

Ձիզի.—Փայլուն իւրեր են, որ Աֆրիկայում շատ սիրում են վայրենիները, իսկ մեզ մօտ՝ օրիորդ-տիկիները: Մէկը միւսից ինչով է պակաս:

Ձիկում.—Առաջ է եկել զիկել բառից. այդ գործողութիւնը ամենից շատ կատարում են մանրամարդութեան սիրահարները: Մտադրութիւն կայ առաջիկայ աշնանից հայոց դպրոցներում էլ մտցնել այդ մանկավարժական նորութիւնը (կարծես թէ մինչև հիմա չկար):

Ձնիիտ.—Սրա ուժեղ տեսակը կոչւում է քամի, որ աւելի շատ փչում է խմբագրատներում:

Ձոկ.—Կոչւում են այնպիսի մարդիկ, որոնք թէև առատածեռն բարեգործութիւններ են անում, բայց և այնպէս նրանց զրպանները միշտ էլ հաւասարակշռութիւն են պահպանում:

Ձրթ.—Հաւաքարից գողացած բառ է, որ գործ են ածում պօլեմիկաների ժամանակ հօնօրար պահանջող գրողները:

Էնցիկլօպեդիստ Փառեմսոզ

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Աղախինը (շտապ ներս մտնելով).—Աղա, աչքներդ լոյս,—Աստուած ձեզ մի տղայ պարզեց:

Խմբագիրը (սաստիկ զբաղւած).—Ես դրա մէջ տպագրութեան արժանի բան չեմ գտնում. գցիւր կամբիւղը:

Լիլիպուտի

Հինը նոր—Ընկեր

Երբ երէկայ տիրացուն Դերասան է խիստ փքուն, կամ թէ բուրժւան կեղեքիչ Դարձել է մեծ քարոզիչ, Մենք զովեստով անսովոր Ձայն ենք տալիս խիստ հօր —Հինը նոր Շնհաւոր:

Երբ տեսնում ենք հայ կնոջ Լիբր տարազով—մերկ ամբողջ՝ Եւ կամ օրիորդ, պատանին Տէր չէ նոյնիսկ իր գլխին, Մենք հրճւանքներ նորանոր՝ Շոռայում ենք ամեն օր —Հինը նոր Շնհաւոր:

Իսկ երբ մէկը լսում է իր ականջով հարագատ, կամ երբ հայը լսօում է Լսկ իր լեզուով և ազատ, Մենք զարմացած, քար կտրած, Ասում ենք—«ուհ, նորը հին... Կեղծ է, կեղծ է իմ հոգին»... Խննթ

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՓՕՐԻՉՄՆԵՐ

(Փ. ՎՕյլտէրից)

Աշխատանքը՝ մարդու կեանքն է:

Կեանքի վերջը տիրազին է, միջուկը բանի պէտք չէ, իսկ սկիզբը ծիծաղելի է:

Ցանկութիւնն ու կամքը երկու խիստ տարբեր առարկաներ են, այնչափ տարբեր, որ մարդ յաճախ ուզում և անում է այն, ինչ նա չէ ցանկանում: Իր ցանկութիւնների գէմ կուելը՝ ազատութեան ամենազեղեցիկ արտայայտութիւնն է:

Ընթերցողի աչքերն աւելի խիստ դատաւորներ են, քան լսողի ականջները:

Քննադատութիւնը հերքելը դատարկ ինքնասիրութիւն է, զրպարտութիւնը ջրելը՝ պարտականութիւն*):


Երկիրը աստուածային տաճարներից մինն է:

Ով ներում է ոճրագործութիւնը՝ նա նրա համախոհն է դառնում:

Պատմութիւնը՝ թագաւորների գիրքն է:

Եթէ տպագրելիս լինէին միայն օգտա-

*) Սոսորհ նւէր մեր «գոտող» գրողներին՝ թարգմանելցի:



—Մեծագատիւ պարոն, ահա քանի երբորդ տարին է, որ ես ձեզ վրայ սիրահարւած եմ, ուզում եմ հետս ամուսնանաւ...
 —Ե՛ս... Ես, չեմ հաւատում. քեզանից մեծ՝ և հասակով թոռներ ունեմ:
 —Ահա այդ պատճառով էլ ես ձեզ սիրում եմ...



ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՐԱՌԱՆՈՅՆԵՐՈՒՄ ՅՈՒՆԻՄ ՍԿՋՐՆԵՐԸ

—Այս ցրտերին դուք ինչ էք անում, չէք մրսում, չէք բժշկում...
 —Ե՛ս... ինչպէս ասած... ոչինչ. սա ցրտերը սառը վաննաների տպաւորութիւն են թողնում տաք բաղնիք չիտոյլ:

ՅԵՐԵՎԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ Ժ Ի Ծ Կ

Ե. Ի. Միևստեանց

Ներքին և Երեխայոց և ստամոքս-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում: Ընդունելութիւնը առ. 9-11 ժ. երեկ. 5-7 ժ.: Ելիզաւետին սկայա, 39: 00-112

Բ Ժ Ի Ծ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌՈՒԿԱՆ, ՎԵՆԵՐՍԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ: Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9-12 և երեկ. 6-9. Ելիզաւետեան փող. № 28. 000-114

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

Հիւանդներ ընդունելու է, ըստ սովորութեան մայիսի 25-ից մինչև սեպտեմ. 10 Կ Ի Ս Լ Ա Վ Օ Գ Ս Կ Ո Ւ Մ ՕՏԵՂ ԲԵՇՏԱՈՒ (օ. մ.) 20-9

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«ՃՈՂՈՐԲԵՆ Յ. ՔԱՀՆԵՆՑ»-Ի

ՆԱԽՇՈՒՆԸ՝ վէպը. 250 երես, գինն է 80 կոպ. հարելին 25% զիջում: Պահեստը հեղինակի մօտ է: Ապառիկ ոչ ոքի չի ուղարկել: Գրավածառները և այլ պէտք է դիմեն՝ Тифлисъ, Священнику Сааку Саакянцу Мих. пр. Тандоевская церковь. 3-2

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Երկրորդ տպագրութեամբ ՆԵՐՍԷՍ ՔԱՀ. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑԻ

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ

ԸՆԳՐՁԱԿ ԿԵՆՍԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(ձեմարանական դիսերտացիա) պատկերով, քաղած մեծ մասամբ անմահ հայի ինքնաձեռագիր յուշատետրներից: Դիւնը 75 կոպ. (եօթնասուն և հինգ կոպ. Դիմել՝ Թիֆլիսում «Գուստոնբերգ» գրավածառանոցին. Բագուում-«Ստորուզնիկ Լ Նըլը. Միրզաբեգեանցների» 20 օրինակից աւելի կանխիկ գնողները կարող են դիմել հեղինակին Բագուում՝ վճարելով իւրաքանչիւրի համար 50 կոպէկ: 10-3

կար գրւածքներ, այն ժամանակ մենք հարիւր անգամ աւելի պակաս գրքեր կունենայինք:

Երբ ամեն ինչ կորած է, երբ այլևս յոյս չկայ, — կեանքն անարգանք է, մահը՝ պարտաւորութիւն:

Թարգմ. Գ. Բարուրեանց



ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԸՍՌԱՆՈՍՆԵՐԻՆ

Անվերջ նամակներ է ստանում «Փողրաթ» ընկերութիւնը ճառագիտներից, ուղերձամատուցներից, մատուցներից և անվերջ շատագիտներից, թէ ինչու ճառագիտների համար ոչ մի պայման չէք դրել. բայց ընկ. խնդրում է մի փոքր էլ համբերել, շուտով լոյս կը տեսնի և ճառագիտների պայմանագիրը բաղկացած 1000,000 յօդածրից. շտապելու կարիք չկայ. ընկ. առ այժմ զբաղւած է գործիչների և գրիչներին յորելեանները տօնելու հարցով. խնդրում ենք յարգոյ մեծախօս-ճառագիտներին «քիչըմ» համբերող լինեն. միք վախենալ, չէ որ առանց ձեզ չի կարող ոչ մի հայկական յորելեան տեղի ունենալ, եթէ այդ յորելեանը կատարելիս լինի նոյն իսկ «Марсь»-ի վրայ:

«Тише бдешь, дальше будешь», ասում է ուսական առածը:

Ի դիմաց «Փողրաթ ընկ.» և Բալասանի շրջանի Զարբատեան նահանգի ի գիւղն Նաֆթա-շախտայի տէր և սնորէն

Խորէն-ժամ-դը-Բիւլ

«ՓՈԴՐԱԹ»-Ի ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

«Փողրաթ» ընկերութեան յայտարարութիւնը լոյս տեսնելու օրից, ամեն օր ընկերութիւնս ստանում է փթերով նամակներ. ուստի ստիպւած ենք մեր պատասխանները տալու բոլոր մեզ դիմող գործիչներին, թէ ինչ պայմաններով պէտք է տօնենք յորելեանները:

Գ. Բալասանեանին.—Ստացանք ձեր նամակը. ձեր բոլոր պայմաններին համաձայն ենք, եթէ դուք էլ մեր պայմանները կընդունէք, 1) ձեր յորելեանը կըտօնենք արտասահմանում, Համադանում. 2) միայն այն պայմանով եթէ ձեր ճառագիտը լինի Ս. Քամալեանը. հակառակ դէպքում չենք կարող տօնել:

Հ. Առաքելեանին.—Է՛հ, դուք էլ ձեզ շատ էք երևակայում, այդքան էլ թունդ պայմաններ... 15,000 բլինչ խաբար է... չենք կարող վճարել. բացի այդ ձեր հասակը շատ կարճ է, և ստիպւած պէտք է լինենք մի «տարուբեմ» գալակալ տանք, որ բարձրանաք տարուբեմայի վրայ, որպէսզի հասարակութեան աչքում երևաք: Կարգացէք երրորդ պայմանը եթէ համաձայն էք՝ գրեցէք. միայն տարուբեմայի ծախսը ձեզանից:

Ղ. Մելիքեանին.—Փողի մասին շատ էք բարացնում, բայց առածն ասում է «բոջ չվալ բոջ չանագ» վուչինչ չի ըլի. ինչպէս տեսնում ենք ձեզ այնքան էլ չէ կարելի հաւատալ. ապագայում գուցէ տօնենք ձեր երկուհարիւրամեակը, եթէ միայն յիսուն հազար նւիրէք «Հորիզոն»-ին:


Դր. Զալխուշեանին.—Ձեր յիսնամեակը կըտօնենք հարուստների պատկերների առջև «Հայր մեր»-ով:


Յ. Թումանեանին.—Է՛հ, դուն էլ որ բռնցիկը հոռապարբակախօսութեան պպ... ոչը, բանդ շատ բուրթ է, չեմ կարծում որ հարիւրամեակը էլ տօնենք:

Շիրվանզադէին.—Ա՛խ, ախոս որ երազ էր... երկրորդ անգամ չենք կարող տօնել. նամանաւանդ աւտօմօ... սեփ... տուն... ո՛չ, ո՛չ, չենք կարող, մտքներիցդ հանեցէք. աւելի լաւ է դիմեցէք, Ս. Թառախանցին, նա ձեր խաթրը շատ ունի և սիրում է, գուցէ իր կողմից կըտօնի:

(Կըշարունակի)

Խորէն-ժամ-դը-Բիւլ






—Կինս ինձ անպատեց, ես չեմ կարող հետը ապրել:
 —Իսկ մարդս հօ, Աստուծ ազատէ, օրտէան հինգ անգամ է թակում, ես չեմ կարող այլևս մի օր...
 —Մպասեցէք, գործերը կըքնենք...

—Այս քաւթարը հողիս հանեց, էլ ինձ չէ հաւանում. մէ գլուխ մատղանաս աղջիկների հետ պարտէզներումն է թրե դալիս, ես չեմ կարող այլևս այսպիսի կեանք տանել:

—Ինքն էլ... ինքն էլ մի բան չէ, պարոն դատաւոր. աչքը ուրիշների վրայ ունէ, այլևս չեմ կարող հետը ապրել, ուզում եմ բաժանուել, ապահարզան եմ խնդրում...

—Մպասեցէք մի քիչ ևս—դուք . ապահարզան կըստանաք:



—Անտանիկ դրուքիւն է, պարոն դատաւոր, երեխաներին անտէր թողած՝ ինքը ամբողջ զիշերներով ժողովարանում լսօտ է խաղում, ինչ գաղում եմ՝ տանուլ է ապիս:

—Ի՞նչ անեմ, յարգելի դատաւոր, զիշեր-ցերեկ ամուսինս տուն չի գալի, Արտիստիկում ու շԻՍԿ. ԿՈՅՃԱՆՈՒՄ թուղթ է խաղում, գաւակներին չէ ճանաչում—չեմ կարող հետը ապրել...



Այստեղ թաղած ամուսիններ ...եաններ, դատարանում խնդիր են ներկայացրել և ապահարզան են խնդրել. գործը նշանակւած է առաջիկայ ամսին—բայց ափսոս, որ սրանք արդէն մեռած են...